28.05.2025

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սևան համայնքի հարգարժան բնակիչներ

Սիրելի հայրենակիցներ

Շնորհավորում եմ բոլորիս Հանրապետության տոնի առթիվ:

Մայիսի 28-ը Հայաստանի Առաջին հանրապետության ծննդյան և Սարդարապատի հերոսամարտի օրն է:

Դարեր շարունակ պետություն ու պետականություն չունեցող ժողովուրդը թոթափեց իր ուսերին դրված մեծ բեռը և 1918թ. ոչ միայն ինքնակազմակերպվեց, այլ նաև ստեղծեց պետություն:

107 տարի անց էլ Առաջին հանրապետության ստեղծման օրը մեզ համար եղել և մնում է ոչ միայն խորհրդանշական, այլ նաև պատմական և կարևորագույն օր, որն իր տեղն է ամրագրվել մեր երկրի տոնացույցում:

Առաջին Հանրապետությունը ստեղծվեց մեր ժողովրդի համար ծանր ու բախտորոշ ժամանակահատվածում, ու մայիսի 28-ն էլ դարձավ ճամփաբաժան՝ փոխելով մեր պատմության ուղին, հային վերադարձնելով իր ինքնությունը, ձևակերպելով մեր նպատակներն ու ապագան:

Չնայած երկուսուկես տարվա կենսագրությանը՝ Առաջին հանրապետությունը կատարեց իր պատմական առաքելությունը, որն անգնահատելի է:

Հայաստանի Առաջին հանրապետության ծնունդը Հայաստանի պատմության բեկումնային էջերից է, որն իր շուրջը համախմբեց հայրենիք-պետություն ունենալու ձգտմամբ ապրող ժողովրդին:

Այս բարդ ու դժվարին ժամանակահատվածում, երբ աշխարհաքաղաքական, բարոյահոգեբանական, ֆիզիկական, անվտանգության լուրջ մարտահրավերներ ենք հաղթահարում ամեն օր, ես ցանկանում եմ, որ մենք միավորվենք ազգային համախմբման գաղափարախոսության ու հայրենիքի պաշտպանության, նրա անվտանգությոան ու կայուն զարգացման գաղափարների շուրջ:

Սիրելի հայրենակիցներ

Իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի, բնակավայրերի վարչական ղեկավարների և համայնքի ավագանու անունից ևս մեկ անգամ շնորհավորում եմ բոլորիս հայ ժողովրդի համար պատմական ու նվիրական օրվա՝ Մայիսի 28-ի առթիվ:

Մաղթում եմ ոգու կորով, մեծագույն կամք, միասնականություն, հավատ ապագայի նկատմամբ: Արժանի լինենք մեր բոլոր ժամանակների հերոսների թողած պատգամներին, մեր նվիրումի ու ջանադիր աշխատանքի շնորհիվ ստեղծենք ուժեղ ու հզոր պետություն: